

ՎԱՀԱՆ ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Մեր մոլորակի վրայ մենք բոլորս ժամանակաւոր հիւրեր ենք. ճակատագիրը իւրաքանչիւրիս համար պատրաստել է վախճան, միայն չը գիտենք, որքան մօտ է մեզ այդ օրհասական սահմանը...

Վահան Նալբանդեան միտաւ. ո՞վ կը սպասէր, որ այդ չնորհալի երիտասարդ ինտելիգէնտը տակաւին իր կեանքի 26-րդ դարունը չը տեսած՝ կը կնքէ իր մահկանացուն. միթէ ամենքս համոզուած չէինք, որ նրա առաջ դեռ երկար ճանապարհ կայ անցնելու. բայց ճակատագիրը այլ կերպ էր վճռել...

Բնութիւնից օժտուած ընտիր բարեմասնութիւներով՝ ուսումնաստիւնչ, համեստ, բարերարոյ, նա կարեւոր ինտելիգէնտ ոյժ էր, որ նոր էր հանգէս եկել հայ գրական և մանկավարժական ասպարիզի վրայ. այն գիտական պաշարը, որ նա ձեռք էր բերել Գերմանիայում իր 6-ամեայ ուսանողութեան ժամանակ, նրան միջոց տուեց աշխատակցել մամուլին, իրբեւ պատրաստ գրական ոյժ. Ամեն բան, ինչ որ զուրս էր գալիս նրա գրչի տակից, զարմանալի բարեխղճութեան և ուսումնասիրութեան կնիք էր կրում. խոստովանում ենք անկեղծ, մենք շատ քիչ ենք պատահել մեր կեանքում նրա պէս ազնիւ մտածող, դատող և գրող ինտելիգէնտ. իր գրածքներում նա գիտէր առաջնորդուել միայն օրբէկսիւ սկզբունքներով, լինէր իր գրածը դուռ գրական աշխատանք, պատմական էտիւդ կամ թատրոնական բեցէնդիտ. Նալբանդեանին մի անգամ տեսնողը այլ եւս չէր կարող մոռանալ, այնչափ զրաւիչ էր նրա հոգեկան պատկերը:

Նա աշակերտական նստարանի վրայ էր, երբ ես առաջին անգամ նրան հանդիպեցայ և սիրեցի հոգւոյս ամբողջ ոյժով. դա 1889 թուին էր, նա այն ժամանակ Ներսիսեան գպրոցի 3 դասարանի աշակերտ էր. համեստ, խոհուն, աշխատասէր, բարեբարոյ, նա հաւասարապէս ամենից սիրուած էր, թէ իր ընկերներից և թէ ուսուցիչներից. այսօրուայ պէս ես յիշում եմ

Նրա աշակերտական սյառիկերը, որի վրայ երբեմն թեթեւ թախիծ և մտահոգութիւն էի կարգում, ո՞վ դիտէ, թերեւս այն ժամանակից նրա մէջ ձեւակերպւում էին որոշ ձգտումներ և իդէալներ... Սլացան տարիները և մի օր Նալբանդեան՝ արդէն Ներսիսեան դպրոցի առաջին շրջանաւարտը՝ աւարտման վկայականը ձեռին, միջոց էր որոնում բարձրագոյն ուսում սեանալու և այդ միջոցը առեց նրան մեր Քամոյեանց եկեղեցին բարեհաճութեամբ վեհափառ Հայրապետի Մեծ էր այդ ժամանակ նրա սրտի յոյզը—չէ որ նա արդէն իր փայտալած իդէալին մօտ էր—գնալ Գերմանիա ուսումը շարունակելու, այդ էր նրա յստակ ոգու իդէլը, որ յետոյ իրականութիւն ստացաւ։ Վեց բովանդակ տարի նա մնաց այնտեղ, խորասուզուած իր պարապմունքների մէջ, նուիրուած ուսման մինչև ինքնամոռացութիւն։ Մերթ ընդ մերթ ծխական համայնքի ակաւնջին հասնում էին լուրեր իր սիրած որդեգրի յառաջադիմութեան մասին։ Գերմանիայից վերադարձող ուսանողները խօսք չէին գտնում արտայայտելու իրանց հիացմունքը անդուգական ընկերոջ մասին—նա այնտեղի ուսանողական շրջանի ամենասիրուած, յարգուած ֆանդաֆն էր։ 1900 թուի վերջն էր, երբ նա վերադարձաւ Գերմանիայից, աւարտման դիպլոմը ձոյցը, նոյն խոհեմ, համեստ, բայց լուրջ գիտութեան պաշարով ծանրաբեռնուած Վահանը, լի անընկճելի տենչով մեր մտաւոր անդաստանի բեղմնաւոր մշակը լինելու, բայց ինչ դառն հեգնութիւն, դեռ նոր էր ոտք դրել այդ մշակը իր ընտրած ասպարիղի վրայ, յանկարծ յաւիտեան չբացաւ նրանից, մնաց միայն մի թարմ հողաբլուր, որ այսօր ողողւում է ծանօթների և բարեկամների ազի արցունքներով։ Մարդկային լեզուն լռում է ճակատագրի անողոր դատաւճռի առաջ, բնութեան դադտնիքը անքննելի է։ Թող, ուրեմն, որդեկորոյս ծնողների անհուն վիշտը գտնի հողեկան սիրտինք այն ընդհանուր և անկեղծ ցաւակցութեան մէջ, որ բուռն կերպով արտայայտեց հայ հասարակութիւնը այդ շնորհալի երիտասարդի ողբերգական մահուան առիթով, թող Վահան Նալբանդեանի կարճ, բայց խորհրդաւոր կեանքը լինի կենդանի ուղեցոյց հայ նորաբողոք սերնդի համար, այդ կը լինի ամենանուիրական անթառամ պսակը նրա վաղաժամ գերեզմանի վրայ։

Յ. ՍՊԵՆԴԻԱՐԵԱՆ